

Նապաստակները անտառում

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Նապաստակները թաքնվել են անտառում: Պետք է բոլորին գտնել: Միայն թե անտառն իրենից ներկայացնում է անգլերեն մեծատառերից և փոքրատառերից կազմված տող: Իսկ նապաստակն անգլերեն `rabbit` բառն է, որի տառերը տողում պարտադիր չէ, որ հաջորդաբար և միասին լինեն: Նապաստակների տառերը ցրված են տող-անտառում: Հարկավոր է գրել ծրագիր, որը հաշվի անտառում թաքնված նապաստակների քանակը: Ավելի ֆորմալ՝ պետք է հաշվել, թե մուտքային տողում տրված տառերից քանի `rabbit` բառ կարելի է կազմել: Ընդ որում, բառերի տառերից ցանկացածը կարող է լինել ոչ միայն փոքրատառ, այլև մեծատառ:

Մուտքային տվյալներ

Տրված է մինչև 1024 երկարության անգլերեն տառերից կազմված տող:

Ելքային տվյալներ

Արտածել մեկ թիվ՝ տրված տողում նապաստակների քանակը:

Օրինակ

Մուտք	Ելք
BRaaibtbritBTsOp1r	2
RBaitt	0